Առաջարկություններ և դիտողություններ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված և ներկայացված ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվում եմ հետևյալ առաջարկությունները.

1. Ընդունել նոր օրենք, այլ ոչ թե փոփոխություն կատարել գործող օրենքում, քանի որ փոփոխությունների ծավալը մեծ է, ինչպես նաև շարադրված է օրենքի նախագծի ձևաչափով:
2. Հոդված 1. Սույն Օրենքով պետք է գնահատվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, իսկ մարդու առողջության վրա ազդեցությունը պետք է գնահատվի ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և համապատասխան Կարգի համաձայն, մինչև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը: Այդ պատճառով, առաջարկվում է «գնահատումներ» բառը փոխարինել «գնահատում» բառով:
3. Հոդված 4. Առաջարկում եմ հասկացությունները շարադրել այբբենական կարգով:
4. Հոդված 4. 6-րդ կետ. «ՌԷԳ» հապավումը բացել: Առաջին անգամ պետք է նշել ամբողջությամբ, փակագծում նշելով հապավումը, որպեսզի հասկանալի լինի ինչ է այդ հապավումը նշանակում:
5. Հոդված 4. 14-րդ կետը հանել: Փորձաքննությունն իրականացնում է պետական լիազորված մարմինը, գրասենյակը վարչական մարմին չէ, հետևաբար պետք է նախագծի տեքստում նշել «պետական լիավորված մարմին» բառերը, «գրասենյակ»-ի փոխարեն:
6. Հոդված 4. 17-րդ կետը . «համայնք» և «համայնքներ» բառերը փոխարինել « բնակավայր» և «բնակավայրեր» բառերով: Նախագծի ամբողջ տեքստում կատարել համապատասխան փոփոխություն: Համայնքների խոշորացման պայմաններում համայնքի մաս են կազմում բնակավայրեր, որոնք ազդեցություն չեն կրի և նրանց

մասնակցությունը որոշումների ընդունմանը կարող է խախտել ազդակիր բնակավայրերի բնակիչների իրավունքները՝ վերջինների ձայնը կկորի ընդհանուր բնակավայրերի ձայների մեջ և ազդեցություն կրող բնակավայրերը դուրս կմնան որոշումների ընդունման գործընթացից, ինչն Օրհուսի կոնվենցիայի պահանջների խախտում է:

7. Հոդված 4. 18-րդ կետում Նախագծում օգտագործված են նույն նկարագրությունը ունեցող մի քանի սահմանումներ՝ «հանրություն», «ազդակիր համայնք», «շահագրգիռ հանրություն», «գործընթացի մասնակիցներ» Նշվածների տարբերությունը, իրավունքները և պարտականությունները չի սահմանազատված. առաջացնում է խառնաշփոթ: Անհրաժեշտ է հստակ սահմանազատել նշված հասկացությունները և սահմանել յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները:

8. Հոդված 4. 19-րդ կետ. «շահագրգիռ հանրության» վերաբերյալ նախագծում իրավական նորմ պարունակող դրույթ սահմանված չէ: «Համայնք» բառը փոխարինել «բնակավայր» բառով: Անհրաժեշտ է սահմանել ՇՀ մասնակցության կարգը և իրավասությունները կամ սույն կետը հանել:

9. Հոդված 4. 20-րդ կետում «համայնք» բառը փոխարինել «բնակավայր» բառով:

10. Հոդված 4. 21-րդ կետում «ԲՍԱԳ» հապավումից հետո ավելացնել «կամ ԲՍԱԳ» հապավումը:

11. Հոդված 5. 1-ին մասի 3-րդ կետից հանել «փորձաքննության ժամանակ» բառերը:

12. Հոդված 5. Լրացնել հետևյալ կետերով.

- «առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքի երաշխավորումը;
- էկոլոգիական համակարգերի հավասարակշռության և բույսերի և կենդանիների բոլոր տեսակների պահպանման անհրաժեշտությունը՝ ներկա և ապագա սերունդների համար;
- բնապահպանական, առողջապահական, սոցիալական բոլոր գործոնների գնահատման և փորձաքննության ենթարկելու պարտադիրությունը:»

13. Հոդված 6. 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ կերպ. « 1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության՝ վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրա:»

14. Հոդված 6. 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ. «3. Գնահատման և փորձաքննության խնդիրներն են՝

1) վերլուծել նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավորությունը և նպատակահարմարությունը հաշվի առնելով էկոլոգիական բոլոր սահմանափակումները.

2) գնահատել հիմնադրութային փաստաթղթի, նախատեսվող գործունեության և դրանց այլընտրանքների հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա և վտանգավորության աստիճանը.

3) ստուգել շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության, հայեցակարգի և դրանց այլընտրանքների հնարավոր էկոլոգիական ազդեցության աստիճանը, հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, այդ հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունը, ինչպես շահագործման և իրականացման գործընթացում, այնպես էլ արտակարգ իրավիճակների ժամանակ.

4) կանխարգելել, նվազեցնել կամ բացառել հիմնադրութային փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունները ու դրանց հետևանքները

5) արգելել շրջակա միջավայրի վրա անդառնալի վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած նախատեսվող գործունեություն.

6) գնահատել արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը.

7) ապահովել հասարակության ներգրավումը և մասնակցությունը փորձաքննության բոլոր փուլերում:»

15. Հոդված 7. Վերնագիրը շարադրել հետևյալ կերպ. «Գնահատման և փորձաքննության շրջանակները

16. Հոդված 7 շարադրել հետևյալ կերպ. «1. Գնահատումն ու փորձաքննությունը պետք է ընդգրկեն.

1) նախատեսվող գործունեության հնարավոր ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրումը և գնահատումը.

2) մթնոլորտային օդի որակական և քանակական ցուցանիշները, մթնոլորտն աղտոտող նյութերը, աղտոտվածության մակարդակը.

3) մակերևութային և ստորերկրյա ջրերը, դրանց դասը, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, աղտոտվածությունը, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը, .հանքային ջրերի աղբյուրների պահպանության սանիտարական գոտիների առկայությունը:

4) հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը.

5) երկրաձևաբանությունը, լանջերի թեքությունը, երկրաբանական և տեկտոնական կառուցվածքը, արտաքին երկրաբանական երևույթները, օգտակար հանածոները, ընդերքօգտագործումը.

6) լանդշաֆտը, բնության հատուկ պահպանվող տարածքները կամ բնապահպանական հողերը, բնակավայրերի կանաչ գոտիները,

7) բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը, բնակության միջավայրերը, աճելավայրերը, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, ոչ տեղական՝ ինվազիվ բուսական և կենդանական տեսակների, Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում կամ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված կենդանիների կամ բույսերի առկայությունը, կենդանիների միգրացիոն ուղիները և բնադրավայրերը.

8) անտառները՝ գործառնական նշանակությունը, տեսակային կազմը, վիճակը (կենսունակությունը, լրիվությունը, բոնիտետը, վնասատուներով վարակվածությունը, տարիքային կազմը).

9) կլիմայի փոփոխության վրա ազդող գործոնների առկայությունը.

10) պատմության և մշակույթի հուշարձանները, կառույցները, ենթակառուցվածքները, տրանսպորտային միջոցներով ծանրաբեռնվածությունը.

11) թափոնի կազմը և դրա բաղադրիչների թունունակությունը, թափոնների գործածությունը, վտանգավոր հատկությունները, վտանգավորության աստիճանը, թափոնի քանակությունը, ծագումը (ըստ տեխնոլոգիական կանոնակարգի).

12) ֆիզիկական ազդեցությունները՝ աղմուկը, թրթռումները (վիբրացիան), իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթումները.

13) ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները.

14) սոցիալական գործոնները, ժողովրդագրական կազմն ու բնակչությունը.

15) արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարների, վտանգավոր տարերային երևույթների առաջացման հավանականությունը:

16) տնտեսական գործոնները՝ արդյունավետությունը, ազդեցությունը տնտեսության այլ ճյուղերի և այլ տնտեսավարողների իրավունքների վրա:

2. Գնահատման և փորձաքննության իրականացման գործընթացում, ելնելով նախատեսվող գործունեության տեսակներից և առանձնահատկություններից պետք է դիտարկվեն՝

1) այլընտրանքային լուծումներ, այդ թվում՝ զրոյական գործողության այլընտրանք (նախատեսվող գործունեության բացառում), դրանց համեմատական վերլուծություն և առավել ընդունելի տարբերակի ընտրություն.

գ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության վերացման կամ նվազեցման միջոցառումներ.

դ) նախատեսվող գործունեության բնապահպանական վնասակար ազդեցության պատճառով ընտրված զրոյական տարբերակի դեպքում տնտեսական և սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի վրա հետևանքների մանրակրկիտ գնահատում:

3. Նախատեսվող գործունեության փորձաքննության ընթացքում գնահատվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը կառուցման, շահագործման, լուծարման ընթացքում և լուծարումից հետո, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում:

4. Նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության ընթացքում հաշվի են առնվում տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական, էկոլոգիական և պատմամշակութային առանձնահատկությունները:»

17. Հոդված 9. 1-ին մասը լրացնել 13-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ. «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման օրինականության վերահսկողությունը։»

18. Հոդված 10. 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «6) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն իրականացնելը, փորձաքննական եզրակացության կազմումն և փորձաքննության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշման ընդունումը.

19. Հոդված 10. 1-ին և 2-րդ մասերը միացնել, քանի որ 1-ին մասում առկա են փորձաքննությանը վերաբերող լիազորություններ.

20. Հոդված 10. 1-ի մասի 7-րդ կետից հանել հետևյալ բառերը. «ենթակա լինելը որոշելը», քանի որ լիազոր մարմինը չի որոշում ենթակա է փորձաքննության թե ոչ, այլ դա որոշվում է օրենքով։ Սույն կետում պետք է նշել՝ փորձաքննություն իրականացնելը նշված դեպքերում։

21. Հոդված 10. 1-ին և 2-րդ մասի 1-ին կետից հանել «համաձայնեցնել» բառը, սույն կետը պետք է շարադրել. «հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության

ՇՄԱԳ և ԲՍԱԳ հաշվետվությունների ներկայացումը՝ դրանց առնչվող բոլոր պետական մարմիններին և նրանց կարծիքների հավաքագրումը և հաշվի առնումը՝ որոշում կայացնելիս։

22. Հոդված 10. 1-ին և 2-րդ մասի 3-րդ կետը հանել, քանի որ օրենքով սահմանված չէ կարգ՝ ձեռնարկողին՝ նախատեսվող գործունեության և ՇՄԱԳ փորձաքննության ենթակա լինելու տեղեկատվություն տրամադրելու մասին։

23. Հոդված 10. Լրացնել նոր կետով, հետևյալ բովանդակությամբ. «ազդակիր բնակավայրերի ցանկի կազմում և հաստատում լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ»

24. Հոդված 11. 1-ին մասի 1-ին կետից հանել «եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ» բառերը։

25. Հոդված 11. 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. 4) գնահատման գործընթացներում ձեռնարկողին՝ գրավոր դիմումի հիման վրա, մարզին առնչվող տեղեկատվության տրամադրում:

26. Հոդված 11. 1-ին մասը լրացնել 5-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. 5) նախատեսվող գործունեությանը և հանրային լսումներին ներկայացված փաստաթղթերին առնչվող տեղեկատվության տրամադրում հանրությանը։

27. Հոդված 12. 1-ին մասի 1-ին կետից հանել «եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ» բառերը։ «Համայնք» բառը փոխարինել «բնակավայր» բառով։

28. Հոդված 12. 1-ին մասի 1-ին կետի 3-րդ կետում «տարածքին» բառից առաջ ավելացնել տվյալ համայնքի» բառերը։

29. Հոդված 12. 1-ին մասի 1-ին կետի 4-րդ կետը հանել, քանի որ ձեռնարկողը գնահատում չի իրականացնում և ՏԻՄ-ը պարտավոր չէ որևէ խորհրդատվություն մատուցել ձեռնարկողին։

30. Հոդված 12. լրացնել 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «նախատեսվող գործունեությանը և հանրային լսումներին ներկայացված փաստաթղթերին առնչվող տեղեկատվության տրամադրում համայնքի անդամներին և հանրությանը։

31. Հոդված 13. 3-րդ մասի 7-րդ կետի «զ» ենթակետը հանել «զ. ասբեստի կամ ասբեստ պարունակող նյութերի արտադրության», քանի որ ասբեստի օգտագործումը արգելված է կոնվենցիայով։

32. Հոդված է 13-րդ. 6-մասը լրացնել «ջրերի այդ թվում հանքային) աղբյուրների պահպանության սանիտարական գոտիներում», ինչպես նաև «պատմամշակութային հուշարձանների սահմաններում» բառերը փոխել «պատմամշակութային հուշարձանների սահմաններին հարող տարածքներում»:

33. Հոդված 14. 1-ին մասում «նախատեսվող» բառից առաջ լրացնել «հիմնադրութային փաստաթղթի»

34. Հոդված 14. 2-րդ մասում «միջավայրի» բառից հետո շարադրել հետևյալ կերպ. «, մարդու առողջության, սոցիալական և տնտեսական դրության վրա։»

35. Հոդված 15. 1-ին մասում հստակեցնել ինչ է նշանակում «համապատասխան լիցենզիա», ո՞մ կողմից տրված։

36. Հոդված 15. 2-րդ մասի 6-րդ կետից հանել «կամ օրենքով սահմանված կարգով ձևավորված աշխատանքային խմբի» բառերը, քանի, որ օրենքում չի սահմանված «աշխատանքային խումբ» հասկացությունը և ինչպես են դրանք ձևավորվում։ Սույն կետը լրացնել «ազդակիր բնակավայրերի բնակիչների, շահագրգիռ հանրության, մասնակիցների» բառերը։

37. Հոդված 15. 6-րդ մասը հանել, քանի որ չի պարունակում իրավական նորմ։

38. Հոդված 16. 1-ին մասի 4-րդ կետում «համայնքը» (համայնքները)» բառերը փոխարինել «բնակավայրը (բնակավայրերը)» բառերով։

39. Հոդված 16. 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «7) հնարավոր բնապահպանական և տնտեսական վնասի գնահատումները: Բնապահպանական և տնտեսական վնասի հատուցման արժեքը և վճարման ժամանակացույցը.

40. Հոդված 16. 1-ին մասի 9-րդ կետը պետք է տեղափոխել՝ «Բնապահպանա-սոցիալական ազդեցության գնահատման /ԲՍԱԳ/ հաշվետվության բովանդակությունը» վերնագրով նոր /լրացված/ հոդված։

41. Հոդված 16. 2-րդ մասի 3-րդ կետում «համայնքը» (համայնքները)» բառերը փոխարինել «բնակավայրը (բնակավայրերը)» բառերով։

42. Հոդված 16. 3-րդ մասը լրացնել հետյալ բովանդակությամբ կետերով. «5) տվյալ ոլորտում անհրաժեշտ փորձ ունենանալը հավաստող փաստաթուղթ և/կամ համապատասխան լիցենզիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում. »

6) մարդու առողջության վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը՝ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ հաստատված։
7) պետական տուրքի վճարման անդորրագիրը։»

Օրինակ, հանքարդյունահանման համար օրենսդրությամբ նախատեսված է 5 տարվա փորձ այդ ոլորտում կամ որոշ գործունեության տեսակներով զբաղվելու համար անհրաժեշտ է լիցենզիայի առկայությունը։ Սանիտարահիգիենիկ փորձաքննություն նախատեսված է «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն։ Փորձաքննության անցկացման համար նախատեսված է պետական տուրք համաձայն «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքով։

43. Հոդված 17. 1-ին մասում «համայնքի» և «համայնքների» բառերը փախարինել «բնակավայրի» և «բնակավայրերի»: Հանել 2-րդ և 3-րդ կետերը, միաժամանակ լրացնել հետևյալ բովանդակությամբ կետերով. «2) նախատեսվող գործունեության մասին հիմնական տվյալներ, մասնավորապես անվանումը, տեղադրման և ջրառի վայրերը, նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը (առանձնահատկությունները), ծավալը, սկսելու և ավարտելու ժամկետները.
3) նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողատարածքի չափը, էներգիայի, ջրի և հումքի վերաբերյալ պահանջները.
4) տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը.
5) շրջակա միջավայրիվրա նախատեսվող գործունեության ազդեցության հիմնական տվյալները, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության և վտանգավորության աստիճանը. ա) նախատեսվող գործունեության մասին հիմնական տվյալներ, մասնավորապես անվանումը, տեղադրման վայրը, նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը (առանձնահատկությունները), ծավալը, սկսելու և ավարտելու ժամկետները. 6) նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ հողատարածքի չափը, էներգիայի, ջրի և հումքի վերաբերյալ պահանջները.
6) տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների համառոտ նկարագիրը.
7) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության հիմնական տվյալները, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության և վտանգավորության աստիճանը.
8) տվյալ ոլորտում գործունեության փորձի և/կամ լիցենզիայի առկայությունը՝ ՀՀ օրենսդրության սահմանված դեպքերում։

44. Հոդված 17. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «Ձեռնարկող ծանուցման հետ միասին ներկայացնում է.

ա) ՇՄԱԳ հաշվետվությունը

բ) նախատեսվող գործունեության վայրի քարտեզները՝ սահմանների, ջրառի և պայթեցումների կետերի նշմամբ:

45. Հոդված 17. 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ կերպ. «2. Տեղական ինքնակառավարման մարմինը (մարմինները) ծանուցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կատարում է(են) հանրության ծանուցում, որից հետո՝ ոչ շուտ, քան 21-րդ և ոչ ուշ, քան 25-րդ աշխատանքային օրն իրականացնում է(են) հանրային լսում (լսումներ):

3. Հանրային լսումից հետո 5 օրվա ընթացքում տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների) ավագանին ձեռնարկողին տրամադրում է (են) նախատեսվող գործունեության վերաբերյալ իր որոշումը նախնական համաձայնության կամ անհամաձայնության մասին:

4. Տեղական ինքնակառավարման մարմինը հանրային լսման (լսումների) արդյունքում կայացրած որոշումը, արձանագրությունը, տեսաձայնագրությունները, հանրության առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները (առկայության դեպքում) հանրային լսումից հետո 10 օրվա ընթացքում ուղարկում է լիազոր մարմնին:»:

46. Հոդված 18. 6-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ կերպ. «Ձեռնարկողը՝ լրամշակված կամ լրակազմված փաթեթը լիազոր մարմին է ներկայացվում պարզաբանող գրությունը լիազոր մարմնից ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում փաթեթի փորձաքննության ժամկետը կասեցվում է մինչև ձեռնարկողի կողմից լրամշակված կամ լրակազմված փաթեթը լիազոր մարմին մուտքագրելու օրը:»

47. Հոդված 18. 10-րդ մասում «կասեցվում է մինչև այդ» բառերից հետո ավելացնել «ստուգումների կամ»:

48. Հոդված 18. 15-րդ մասը հանել: Չեղած բանը չի կարող դրական լինել:

49. Հոդված 19. Վերնագրում «կամ լուծարման կամ փակման» բառերը փոխարինել «դադարեցման» բառով: Գործունեության տեսակները չեն կարող լուծարվել կամ փակվել:

50. Հոդված 19. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ կետերով.

4) նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը (համայնքները), և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի կողմից տրամադրված իրադրության սխեման կամ քարտեզը,

5) նախատեսվող գործունեության նկարագիրը և նպատակը, արտադրական հզորությունները, ֆիզիկական, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը, պահանջվող բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի, արտանետումների, արտահոսքերի,

թափոնների, արտադրական լցակույտերի, ֆիզիկական ներգործությունների նկարագրությունը.

6) նախատեսվող գործունեության հնարավոր այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը.

7) շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները: Տնտեսական վնասի հատուցման արժեքը և վճարման ժամանակացույցը.

8) նախատեսվող գործունեության, ներառյալ՝ այլընտրանքային տարբերակների իրականացման դեպքում, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, բնական ռեսուրսների, պայմանների հնարավոր փոփոխությունների և դրանց ծավալների նկարագիրն առանձին, գումարային և ամբողջական գնահատումը.

9) սոցիալական հնարավոր ազդեցությունները, ռիսկերը, օգուտները, վերլուծական բնութագրերը.

10) հնարավոր արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած ռիսկերի գնահատումը դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները՝,

11) նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները, ներառյալ՝ ջերմոցային գազերի արտանետումները, դրանց բնույթը, ծավալը,

12) բոլոր հնարավոր տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը՝ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, սոցիալական տեսանկյունից.

13) բնապահպանական կառավարման պլանը,

14) նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիրը.

51. Հոդված 19. 4-րդ մասի 2-րդ կետից հանել «կամ նախագծային փոփոխությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա չլինելու մասին» նախադասությունը: Նախագծային փոփոխության բոլոր դեպքերում պետք է նոր փորձաքննություն իրականացվի: Հակասում է 19-րդ հոդվածի 1-ին կետին:

52. Հոդված 20. 4-րդ մասի՝ «Փորձաքննական եզրակացությունը հաստատում է լիազոր մարմինը» նախադասությունը փոխարինել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Փորձաքննական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարը կայացնում է վարչական ակտ համարվող որոշում որը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:»

53. Հոդված 20. 7-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. «7.Փորձաքննական դրական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե հիմնադրութային կամ նախագծային փաստաթղթերով նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական դրական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, որից հետո փորձաքննության ենթակա ցանկացած գործունեություն առանց նոր փորձաքննական եզրակացության համարվում է անօրինական:

54. Հոդված 20. 8-րդ մասը հանել, քանի որ եզրակացությունը վարչական ակտ չէ, իսկ լիազոր մարմնի ղեկավարի որոշման մասին նշված է սույն հոդվածի 4-րդ մասում:

55. Հոդված 21. Վերնագրում և 1-ին մասում «Փորձաքննական եզրակացությունն» բառերի փոխարինել **«Փորձաքննական եզրակացության վերաբերյալ բարենպաստ վարչական ակտը» բառերով:**

56. Հոդված 21. 1-ին մասի 1-ին կետը հանել, քանի որ վարչական ակտի ուժը կորցնելը բացարձակ կապ չունի պաշտոնատար անձին կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հետ, դրանք կարգավորվում են տարբեր իրավական ակտերով և տարբեր նպատակներ են հետապնդում:

57. Հոդված 21. 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ. «Հոդված 21, **Փորձաքննական եզրակացության վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելը**

1. Փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշումը ուժը կորցնում է, եթե.

1) ձեռնարկողը ներկայացրել է կեղծ, թերի, ոչ լիարժեք տվյալներ և տեղեկություն, ինչը հայտնի է դարձել բարենպաստ վարչական ակտը ուժի մեջ մտնելուց հետո;

2) փորձաքննական դրական եզրակացության մեջ նշված՝ պարտադիր կատարման ենթակա պահանջները, պայմանները ձեռնարկողի կողմից չեն կատարվել կամ թերի են կատարվել, կամ դրանց կատարման ժամկետները խախտվել են;

3) ձեռնարկողը գործունեությունն իրականացնում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի և փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով կամ խախտումներով.

4) ձեռնարկողը՝ փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի կամ ՇՄԱԳ հաշվետվության, ներառյալ՝ բնապահպանական կառավարման պլանի կամ շրջակա

միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի կամ փորձաքննական եզրակացության պահանջները կամ պայմանները խախտել է կամ չի կատարել, իսկ սահմանված ժամկետների դեպքում՝ սահմանված ժամկետներում չի կատարել:

5) փորձաքննության ենթարկված նախագծային և հիմնադրութային փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ՝ առանց լիազոր մարմնին այդ մասին տեղեկացնելու.

6) ընդունվել է նոր բնապահպանական օրենսդրություն

7) փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի որոշումը կայացնելուց հետո ի հայտ է եկել էկոլոգիական, սոցիալական և մարդու առողջության վերաբերյալ նոր գործոն, որը.

ա) առկա չի եղել փորձաքննական եզրակացության տրամադրման պահին և որի առկայության պայմաններում գործունեության շարունակումը հակասելու է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության օրենքներին կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին, կամ

բ) առկա է եղել փորձաքննական եզրակացության տրամադրման պահին, սակայն այն չի գնահատվել և/կամ փորձաքննական եզրակացության մեջ դրա մասին չի նշվել:

8) ազդեցություն կրող ոչ բոլոր բնակավայրերն են ճանաչվել ազդակիր, ոչ բոլոր ազդակիր համայնքներում են անցկացվել հանրային լսումներ, կամ թույլ է տրվել հանրային լսումների իրականացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգը, կամ հաշվի չի առնվել որևէ ազդակիր բնակավայրի հանրային լսումների արդյունքում ընդունված մերժման որոշումը:»

58. Հոդված 21. 1-ին մասի 2-րդ կետում «ընդունած» բառի փոխարեն գրել «ղեկավարի» բառը:

59. Հոդված 21. 3-մասը դարձնել 5-րդ մաս: Լրացնել 3-րդ և 4-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքների առկայության մասին տեղեկանալուց՝ 30 օրվա ընթացքում, լիազոր մարմնի ղեկավարը իր որոշմամբ ուժը կորցրած է ճանաչում՝ փորձաքննական եզրակացության վերաբերյալ բարենպաստ վարչական ակտը: 4.Լիազոր մարմինը գրավոր տեղեկացնում է ձեռնարկողին փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշման ուժը կորցրած լինելու մասին, որից հետո փորձաքննության ենթակա ցանկացած գործունեություն համարվում է անօրինական:

5. **Փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշումը** ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանում է Կառավարությունը:»

60. Հոդված 22. 3-րդ մասի 1-ին կետում թվարկված ոչ բոլոր բնագավառները ունեն հստակ լիազոր մարմին /օրինակ, ռեկրեացիան, սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտը/, այդ պատճառով սխալ է նման հղում կատարելը: Սույն կետից հանել «նաև սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բնագավառների» նախադասությունը:

Հոդված 23. 2-րդ մասում լրացնել. «հանրային լսումների անցկացում»

61. Հոդված 23. 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ կերպ.

«2. իրականացնում է անդրսահմանային ազդեցության գնահատում՝ սույն օրենքի 6-րդ գլխով սահմանված կարգով, եթե փաստաթղթի գործողությունը ունի անդրսահմանային ազդեցություն;

3) կազմակերպում է հանրային լսումներ՝ սույն օրենքի 7-րդ գլխով սահմանված կարգով:»

62. Հոված 25. 2-րդ մասում «հաստատում է Կառավարությունը» բառերի փոխարեն գրել «հաստատվում է Կառավարության որոշմամբ»

63. Հոդված 25. 3-րդ մասում նշված է. «անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը համապատասխան հիմնավորմամբ կարող է երկարաձգել սույն օրենքով սահմանված ժամկետները»: Սակայն, չի սահմանված այդ փորձաքննության ժամկետը: Առանց նշելու սույն փորձաքննության ժամկետները, նշվում է երկարացման մասին: Մյուս հոդվածներում էլ նշված է «բացառությամբ անդրսահմանային ազդեցության գնահատման» Անհրաժեշտ է սահմանել հիմնական ժամկետ և երկարացման ժամկետ:

64. Հոդված 27. 4-րդ մասում նշված է. «լիազոր մարմինը ծանուցման քննարկումն ապահովում է առաջնորդվելով սույն օրենքի պահանջներով», սակայն սույն օրենքում այդպիսի պահանջներ սահմանված չեն և պարզ չէ ի՞նչ «քննարկման» մասին է խոսքը: Այս դրույթը պետք է հստակեցնել, մանրամասն նկարագրելով ողջ գործընթացը ծանուցման ստանալուց մինչև համապատասխան որոշման ընդունում:

65. Հոդված 27. 7-րդ մասում «Կառավարության» բառից հետո ավելացնել «որոշմամբ» բառը:

66. Գլուխ 7. Այս գլուխը ամբողջությամբ պետք է վերանայել, շատ դեկլարատիվ է գրված, չեն նշված պարտադիր պահանջները /լսումների քանակը, ժամկետները, պարտադիր պահանջները/ որոնց հիման վրա կհաստատվի Կարգը: Նույնիսկ գործող օրենքի 26-րդ հոդ. դրույթները չեն պահպանվել, կարելի է այդ հոդվածի դրույթները պահպանել, փոփոխելով ժամկետները: Նախագծի ամբողջ տեքստից պարզ չէ, թե երբ են լսումներ անցկացվում, քանի անգամ, ինչ ժամկետներում և այլն: Անհասկանալի է, թե ո՞րն է պատճառը, որ այս նախագծում նվազեցվել են լսումների քանակը, անտեսվել է լսումների իրականացման կարևորությունը և անորոշ, դեկլարատիվ կարգավորումներ սահմանվել: Նախագծի համեմատությամբ այն նույնիսկ զիջում գործող օրենքի կարգավորումներին:

67. Հոդված 29. Շարադրել հետևյալ կերպ.

«Հոդված 29. Հանրության ծանուցումը

1. Հանրությունն իրավունք ունի մասնակցելու ՇՄԱԳ, ՌԷԳ, անդրսահմանային ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներին:
2. Հանրային լսումների ծանուցումն տալիս է լիազոր մարմինը՝
ա) հայտը ընդունելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում և
բ) նախնական գնահատման որոշման նախագիծը լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանը ներկայացնելուց հետո՝
գ) փորձաքննության ներկայացնելուց՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում
դ) փորձաքննության եզրակացությունը լիազոր մարմնի ղեկավարին ներկայացնելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Ծանուցման բովանդակությունը պարունակում է՝
1) ձեռնարկողի մասին տվյալները (անունը/անվանումը, իրավաբանական անձի գրանցման ամսաթիվը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ տվյալ ոլորտում աշխատելու փորձը, լիցենզիայի առկայությունը),
2) հիմնադրութային փաստաթղթի կամ անդրսամանային գնահատման հայտի կամ նախատեսվող գործունեության ամփոփ նկարագիրը,
4) հիմնադրութային փաստաթղթի, կամ անդրսամանային գնահատման հայտի կամ նախատեսվող գործունեության էկոլոգիական, մարդու առողջության, սոցիալական և տնտեսական հավանական ռիսկերը և դրանց վերացման կամ մեղմացման առաջարկվող ուղիները,
5) նախատեսվող գործունեության իրականացման վայրը,
6) հանրային լսումների իրականացման ամսաթիվը, հասցեն, կոնտակտային անձի հեռախոսի համարը
7) հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ փաստաթղթերի փաթեթին ծանոթանալու և տեղեկատվություն ստանալու հասցեն և պայմանները
8) առաջարկություններ ներկայացնելու ժամկետը:

4.Ծանուցումը, հիմնադրութային և նախագծային փաստաթղթերը տեղադրվում են լիազոր մարմնի, ձեռնարկողի, տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնական կայքերում՝ լսումներից առնվազն 15 աշխատանքային օր առաջ:
5. Ծանուցումը հրապարակվում է նաև առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, փակցվում է մարզպետարանի կամ ազդակիր բնակավայրի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչի նստավայրի կամ հանրային նշանակության շենքերի (մշակույթի, արվեստի շենքեր, գիտական, կրթական, ուսումնական նշանակության շենքեր) հայտարարությունների ցուցանակի վրա:»

68. Հոդված 30. Շարադրել հետևյալ կերպ.

«Հոդված 30. Հանրային լսումների իրականացում և առաջարկությունների ներկայացում

1. Հանրային լսումները կազմակերպվում են բոլոր ազդակիր բնակավայրերում առանց բացառության: Ելներով հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության կարևորությունից հանրային լսումներ կազմակերպվում են նաև Երևան քաղաքում:
2. Հանրային լսումները կազմակերպում են.

1) լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի , անդրսահմանային ազդեցության գնահատման ծանուցման, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին՝ լսումներից առնվազն 15 աշխատանքային օր առաջ.

2) ձեռնարկողը՝ հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լսումներից առնվազն 15 աշխատանքային օր առաջ.

3) ազդակիր համայնքի տարածքային կառավարման մարմինները և համայնքի ղեկավարը՝ հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լսումներից առնվազն 15 աշխատանքային օր առաջ:

3. Լիազոր պետական մարմինը, տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ձեռնարկողն ապահովում են հանրության թափանցիկ, ազատ կամահայտությամբ, մատչելի, արդյունավետ և ժամանակին մասնակցությունը ՇՄԱԳ, ՌԷԳ, անդրսահմանային ազդեցության գնահատման, և փորձաքննության գործընթացներին:

4. Հանրային լսումներն իրականացվում են ծանուցումից ոչ շուտ, քան 15-րդ օրը:

5.Լիազոր մարմինը հանրային լսումներին ապահովում է իր ներկայացուցչի մասնակցությունը:

6. Հանրային լսումները համարվում են կայացած, եթե դրանց մասնակցել են տվյալ բնակավայրի չափահաս բնակչության առնվազն 50 տոկոսը:

7. Հանրային լսումների արդյունքում կայացվում է որոշում (համաձայնություն տալ կամ մերժել), որն ընդունվում է լսումներին մասնակից՝ տվյալ ազդակիր բնակավայրի բնակիչների ձայների պարզ մեծամասնությամբ:

8. Հանրային լսումների մերժման որոշումը պարտադիր է լիազոր մարմնի համար՝ որոշումներ կայացնելիս: Արգելվում է հիմնադրութային փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումն՝ ազդակիր բնակավայրերից որևէ մեկի լսումների մերժման որոշման պարագայում:

9. Հանրային լսումների արդյունքում լսումներ իրականացնողը կազմում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրվում է լսումներին մասնակցած և քվեարկությանը մասնակցած անձանց, ինչպես նաև լիազոր մարմնի ներկայացուցչի, տեղական

ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի և ձեռնարկողի կողմից: Արձանագրությունը, որին կցվում է հանրային լսումների տեսաձայնագրությունը պահվում է լիազոր մարմնի մոտ:

10. Հանրությունը կարող է ներկայացնել իր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները գրավոր կամ բանավոր լսումներից հետո 30 օրվա ընթացքում: Լիազոր մարմինը պարտավոր է հաշվի առնել հանրության ներկայացրած բոլոր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները, փորձաքննական եզրակացության հիմքում դնել հանրության մասնակցության արդյունքները և առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:

11. Հանրային լսման մերժման որոշման կայացման դեպքում, լիազոր մարմինը դադարեցնում է գնահատումն ու փորձաքննությունը այն փուլում, որտեղ գտնվում է և դրա մասին 5 օրվա ընթացքում հայտնում է ձեռնարկողին:

12. Յուրաքանչյուր փուլում կարելի է իրականացնել ձեռնարկել առավելագույնն երկու լսում: Եթե հանրային լսումների արդյունքում՝ երկու անգամ կայացվում է մերժման որոշում, ձեռնարկողը սպառում է իր հնարավորությունը նույն հայտով իրականացնելու հանրային լսումներ, իսկ լիազոր մարմինը դադարեցնում է գնահատման և փորձաքննության գործընթացը:

13. . Հանրային լսումների արդյունքները՝ որոշումը և արձանագրությունը հրապարակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում՝ լսումներից հետո յոթ օրվա ընթացքում, ինչպես նաև արտացոլվում են համապատասխան հաշվետվություններում և փորձաքննական եզրակացության մեջ:

14. Հանրային ծանուցման և հանրային լսումների իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

69. Հոդված 31. 2-րդ մաս լրացնել նոր 10-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «Վճարել պետական տուրքը և այլ պետական պարտադիր վճարները, կատարել փորձագետի և հանրային լսումների հետ կապված ծախսերը:»

70. Հոդված 38. 6-րդ կետը պետք է հանել և Օրենքը պետք է ամբողջությամբ ուժի մեջ մտնի, ինչպես նշված է 39-րդ հոդվածի 2-րդ մասում, այդ դրույթները իրար հակասում են:

Հավանաբար 2014թ. Օրենքի մասին է խոսքը:

Սակայն եթե Օրենքի փոփոխություն է արվում, այլ ոչ թե նոր օրենք ընդունվում նման դրույթ գրելը սխալ է:

Նշված կետը հնարավորություն կտա, որ այդ դրույթները երբեք չգործեն, քանի որ հնարավոր է, որ այդ ենթաօրենսդրական ակտերը չընդունվեն, ինչպես մինչ օրս չի ընդունվել գործող Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված Գնահատման մեթոդիկան :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

Funded by the European Union

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐ ՀԿ
ARMENIAN FORESTS NGO

Առաջարկություններ

հարակից օրենքներում փոփոխությունների վերաբերյալ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը.

2) 46-րդ կետը թողնել անփոփոխ: Սույն պահանջը դրված է, որպեսզի Տարածքային կառավարման նախարարությունը ունենա նախնական գնահատման արդյունք, որի հիման վրա կնքի այդ պայմանագիրը, այլ ոչ թե ՇՄԱԳ հաշվետվությունները և կից փաստաթղթերը: Առաջարկվող փոփոխությունը սույն կետի բովանդակությանը ու նպատակին չի համապատասխանում: Բացի այդ անհրաժեշտ է նախնական գնահատում իրականացնելը:

Հոդված 2.

- **Օրենսգրքի 7-ին հոդվածի 1-ին մասը լրացնել 2-րդ կետով. «մարդու առողջության վրա ազդեցության»**

  Նույն մասի 2-րդ և 3-րդ կետերը համարակալել 3-րդ և 4-րդ:

- Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի, հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացումը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով փորձաքննական եզրակացության հաստատումը.»,

- 2.1-ի մասի 3-րդ կետի «բնապահպանության բնագավառի» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտի» բառերով,

3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «3) Ընդերքօգտագործման հետ կապված՝ առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են՝ «/շարադրել դրանք/

- 3-րդ մասը դարձնել 4-րդ

- **Հոդված 5.** Օրենսգրքի 36-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Առանց լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված երկրաբանական ուսումնասիրության ծրագրի և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ղեկավարի որոշման՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործումն արգելվում է:»:

- **Հոդված 6.** Օրենսգրքի 39-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Առանց լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված երկրաբանական ուսումնասիրության ծրագրի և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ղեկավարի որոշման՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքի իրականացումն արգելվում է:»

4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունն ստանալուց հետո լիազոր մարմինը՝ մինչև 20-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:»,

- **Հոդված 7.** Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

1) Հանել 3-րդ մասը. ««3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական:» Չեղած բանը չի կարող դրական համարվել, վբացի այդ 2-րդ մասում ժամկետ չի նշված:

2) Հանել 4-րդ մասի վերջին նախադասությունը, «Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձը օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:»

- **Հոդված 8.** Օրենսգրքի 48.1-րդ հոդված։ Կարծում եմ, որ այս հոդվածը, ինչպես նաև «ՇՄԱԳ և Փ մասին» օրենքի «նախնական գնահատման փուլին» վերաբերող դրույթները պետք է մնան։ Նախնական փուլը շատ կարևոր է, որպեսզի հետագայում ժամանակ և միջոցներ իզուր չծախսվեն։
- **Հոդված 9.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետը թողնել անփոփոխ, քանի որ պահանջում է շրջակա միջավայրի ազդեցության նախնական /պետք է միայն ավելացնել «նախնական» բառը/գնահատական, այլ ոչ թե ՇՄԱԳ և փորձաքննությանը ներկայացվող փաստաթղթերը։ Նախնական գնահատումը շատ կարևոր փուլ է, որպեսզի մի քանի նախարարություն և հանրությունը ի սկզբանի ոչ ընդունելի ծրագրերի վրա իզուր ժամանակ չծախսեն։
2) 2-րդ մասը «ենթարկված» բառից հետո լրացնել «և դրական եզրակացության մասին շրջակա միջավայրի ոլորտի լիազոր մարմնի ղեկավարի որոշման» բառերով:

- **Հոդված 10.** Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը շարարդել հետևյալ խմբագրությամբ

«4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունն ստանալուց հետո՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում», շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը կայացնում է որոշում համապատասխան փորձաքննական եզրակացության վերաբերյալ:»

2) Ուժը կորցրած ճանաչել 5-րդ մասը: Դա հակասում է փորձաքննության պարտադիրության սկզբունքին։
3) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,
4) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,
5) 8-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ղեկավարի որոշումը ստանալուց հետո լիազոր մարմինը՝ մինչև 20-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին:»,

6) 14-րդ մասը «ենթարկված» բառից հետո լրացնել «և դրական եզրակացության վերաբերյալ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին որոշման» բառերով:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 12-րդ բաժնի 12.4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

12.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն.	
1. փորձաքննության գործընթացի իրականացման համար	
ա) նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի տեսակների փաստաթղթերի փորձաքննության համար	բազային տուրքի 2000-ապատիկի չափով, բացառությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար՝ բազային տուրքի չափով, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման կամ հանքանյութի վերամշակման համար, որի համար՝ բազային տուրքի 500-ապատիկի չափով
բ) նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի տեսակների փաստաթղթերի փորձաքննության համար	բազային տուրքի cvափով, բացառությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար՝ բազային տուրքի չափով 50000 դրամը փորձաքննության համար շատ քիչ է կարծում եմ պետք է ավելացնել:
2. հայտի և ձևաթղթի ուսումնասիրության համար ՝	բազային տուրքի 15-ապատիկի չափով, բացառությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնց համար՝ բազային տուրքի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 87-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 87. Շրջակա միջավայրի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների հանձնարարականները չկատարելը

(վերնագիրը խմբ. 08.04.09 ՀՕ-98-Ն, փոփ. 04.03.20 ՀՕ-110-Ն)

Շրջակա միջավայրի օրենսդրության պահանջների խախտումները վերացնելու մասին շրջակա միջավայրի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող անձանց հանձնարարականները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրպատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հինգհարյուրպատիկի չափով և իրավաբանական անձանց նկատմամբ՝ հազարապատիկի չափով:»

Հոդված 2. Օրենսգրքի 94.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 94[1]. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության գործունեություն իրականացնելը

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացումն առանց փորձաքննական դրական եզրակացության վերաբերյալ շրջակա միջավայրի ոլորտի պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշման (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի) կամ այդ որոշումը ուժը կորցնելուց հետո՝

առաջացնում է՝

տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-պատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ հազարապատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 150-պատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-պատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-պատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից մեկամսյա ժամկետում համապատասխան փաստաթղթերի փաթեթը վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից սահմանված կարգով փորձաքննության չներկայացնելը կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացումն օրենքի ուժով մերժված հաշվետվության կամ փորձաքննական բացասական եզրակացության առկայության դեպքում առաջացնում է՝

տուգանքի նշանակում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարպատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 3000-պատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

3. Փորձաքննական դրական եզրակացություն ստացած նախատեսվող գործունեության տեսակների ընդլայնում կամ վերակառուցում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ լուծարում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխություն իրականացնելն առանց փորձաքննական եզրակացության և/կամ առանց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված գրավոր տեղեկացման առկայության առաջացնում է՝

տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-պատիկի չափով և իրավաբանական անձանց նկատմամբ՝ 800-պատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-պատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-պատիկի չափով:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված տեղեկացումը ստանալու օրվանից կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքի նշանակման օրվանից մեկամսյա ժամկետում համապատասխան փաստաթղթերի փաթեթը վարչական պատասխանատվության ենթարկված կամ տեղեկացում ստացած անձի կողմից օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության չներկայացնելը, բացառությամբ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի, կամ նախատեսվող գործունեության տեսակների ընդլայնում կամ վերակառուցում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ լուծարում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխություն իրականացնելը փորձաքննական բացասական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշման առկայության դեպքում առաջացնում է՝

տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 8000-պատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարպատիկի չափով և իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի կամ ՇՄԱԳ հաշվետվության, ներառյալ՝ բնապահպանական կառավարման պլանի կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի կամ փորձաքննական եզրակացության պահանջները կամ պայմանները չկատարելը, իսկ սահմանված ժամկետների դեպքում՝ սահմանված ժամկետներում չկատարելը կամ խախտելը կամ դրանցից շեղվելը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի՝
առաջացնում է՝
տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրպատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրպատիկի չափով և իրավաբանական անձանց նկատմամբ՝ հազարապատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրպատիկի չափով և իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով։

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տուգանքի նշանակման օրվանից տեսչական մարմնի կողմից սահմանած ժամկետում փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի կամ ՇՄԱԳ հաշվետվության, ներառյալ՝ բնապահպանական կառավարման պլանի կամ շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագրի կամ փորձաքննական եզրակացության պայմանները կամ պահանջները չկատարելը, պահանջների կամ պայմանների խախտումները կամ շեղումները չվերացնելն առաջացնում է՝
տուգանքի նշանակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Ա» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհազարպատիկի չափով և իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության «Բ» կատեգորիայի դեպքում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարպատիկի չափով և իրավաբանական

անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել նոր 94.2-րդ հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 94[2]. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության դրական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշման՝ փորձաքննության ենթակա գործունեության թույլատրման մասին որոշում ընդունելը

1. Առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված նախատեսվող գործունեության իրականացման թույլտվություն տալը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել նոր 94.3-րդ հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 94.3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտներին և բնութագրերին ներկայացվող պահանջները և սահմանափակումները խախտելը

1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտներին և բնութագրերին ներկայացվող պահանջները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները խախտելը՝

առաջացնում է տուգանք ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկ դրամի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով, իրավաբանական անձանց նկատմամբ՝ նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել նոր 94.4-րդ հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 94.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա գործունեության մասին չիրազեկելը, հիմնադրութային և նախագծային փաստաթղթերը չհրապարակելը կամ հանրային լսումներ չանցկացնելը, ազդակիր բնակավայրի հանրային լսումների վերաբերյալ որոշումը հաշվի չառնելը

1. Ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին սահմանված կարգով կամ ժամկետում հանրությանը չծանուցելը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների մասին սահմանված կարգով կամ ժամկետում հանրությանը չծանուցելը՝

առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

3. Ծանուցումը, հիմնադրութային և նախագծային փաստաթղթերը, ձեռնարկողի և լիազոր մարմնի կայքում սահմանված կարգով կամ ժամկետում չտեղադրելը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրային լսումներ չիրականացնելը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրային լսումների կազմակերպման և իրականացման կարգը կամ ժամկետները խախտելը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձանց նկատմամբ՝ վեցհարյուրապատիկի չափով:

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության ներկայացրած հիմնավոր կարծիքը փորձաքննական եզրակացությունը հաստատելիս հաշվի չառնելը՝

առաջացնում է տուգանք պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՕՐԵՆՔ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը լրացնել 3-րդ և 4-րդ կետերով հետևյալ խմբագրությամբ. «3) մարդու առողջության պահպանություն; 4) մարդու իրավունքների պաշտպանություն»

2) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մեկնաբանություն. *Նշված առաջարկությունը արվում է սույն փաթեթում, քանի, որ ՀԿ-ների արդարադատության մատչելիությունը կապվում է ՇՄԱԳ օրենքով լսումներին մասնակցության հետ, ինչն Օրհուսի կոնվենցիայի պահանջների խախտում է: Բացի այդ կա դատական նախադեպ, երբ Վերաքննիչ վարչական դատարանը որոշել է, որ ՀԿ-ները իրավունք ունեն հայց ներկայացնել դատարան անկախ նշված պայմաններից*:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

- **Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետում «**սանիտարահիգիենիկ» բառը փոխարինել «մարդու առողջության վրա ազդեցության» բառերով
- **Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ.**

«Հոդված 23. Մարդու առողջության վրա ազդեցության փորձաքննությունը

1.Առողջապահության ոլորտի լիազորված մարմնի կողմից հատուկ կարևորության խնդիրի վերաբերյալ որոշումներ կարող են իրականացվել միայն մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության դրական եզրակացության վերաբերյալ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի ղեկավարի որոշման առկայության դեպքում:

2. Մարդու առողջության վրա ազդեցության պարտադիր գնահատում և փորձաքննություն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում նշված նախատեսվող գործունեության տեսակների նախագծային փաստաթղթերը**:**

3. Մարդու առողջության վրա ազդեցության գնահատումն ու փորձաքննությունը իրականացվում է առողջապահության ոլորտում լիազորված մարմնի կողմից:

4.Մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման կարգը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

1. Առանց մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության դրական եզրակացության վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի որոշման՝ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված **պարտադիր գնահատում և փորձաքննություն պահանջող գործունեությամբ զբաղվելը արգելվում է:»**

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նազելի Վարդանյան
ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ 3-րդ Աշխատանքային խմբի անդամ
«Հայաստանի անտառներ» ՀԿ նախագահ

Սույն առաջարկությունները ներկայացվել ու քննարկվել են «Քաղաքացիական հասարակության դերը բնապահպանական հարցերում որոշումների կայացման գործում» 3-րդ ԱԽ աշխատաժողովին (սեպտեմբեր 25-26, 2021թ., Լճաշեն):

Միջոցառումն իրականացվում է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում: